ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.08.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/198

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ Արմեն Եսայան Աշոտի Ա/Ձ-ի (պետական գրանցման վկայական համար՝ 290.1127099),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.07.2021թ. թիվ 26/26-1/12103-2021 գրությամբ Արմեն Եսայան Աշոտի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 22.07.2021թ. թիվ 01/61-17276 գրության հիման վրա, 28.07.2021թ. թիվ 26/26-1/12103-2021 գրությամբ նախաձեռնել է Արմեն Եսայան Աշոտի Ա/Ձ-ին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Արմեն Եսայան Աշոտի Ա/Ձ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Արմեն Եսայան Աշոտի Ա/Ձ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«20.05.2021թ.-ին armeps.am կայքում հրապարկվել է ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/137 ծածկագրով բաց մրցույթ, որի բացման օր է նշանակվել 27.05.2021թ.-ը: 27.05.2021թ.-ի թիվ 2 արձանագրության 2.1 կետի համաձայն՝ գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել Արմեն Աշոտի Եսայան ԱՁ-ն և «Ժիլյո» ԱԿ-ն: Նույն արձանագրության 4.1 կետի համաձայն՝ «Ժիլյո» ԱԿ-ի հայտում արձանագրվել է անհամապատասխանություններ, այն է՝ հավելված 1.1-ում նշված չէ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը: Նույն արձանագրության 5-րդ կետով նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվել է և «Ժիլյո» ԱԿ-ին առաջարկվել է շտկել արձանագրված անհամապատասխանությունը: 01.06.2021թ.-ի թիվ 3 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Ժիլյո» ԱԿ-ն սահմանված ժամկետում շտկել է արձանագրված անհամապատասխանությունը հրավերի պահանջների նկատմամբ, ուստի գնահատող հանձնաժողովը մասնակցի հայտը գնահատել է բավարար: Նույն արձանագրության 4-րդ կետով «Ժիլյո» ԱԿ-ն ճանաչվել է հաղթող մասնակից որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից: Նույն արձանագրության 5-րդ կետով հանձնաժողովը որոշել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն հայտարարել անգործության ժամկետ և անգործության ժամկետի ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագիր: 24.06.2021թ.-ի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ 09.06.2021թ.-ին ԱԿ-ին ներկայացվել է պայմանագիր կնքելու և որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացնելու առաջարկ, որը ընկերության կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել և ընկերությունը զրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Նույն արձանագրության 1.2 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը ընթացակարգի հաղթող մասնակից է ճանաչել հաջորդ տեղը զբաղեցրած մասնակից Արմեն Եսայան Աշոտի ԱՁ-ին՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի

34-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի՝

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

7. Սույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գնահատման արդյունքում հայտը անբավարար գնահատվելու դեպքում հանձնաժողովը փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է առաջադրում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածով՝ հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է առաջադրվում միայն առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը անբավարար գնահատվելու դեպքում: Հաշվի առնելով վերը մեջբերված 01.06.2021թ.-ի թիվ 3 արձանագրության և 24.06.2021թ.-ի թիվ 4 արձանագրության համապատասխան կետերը, ԱԿ-ի հայտը գնահատվել է բավարար, որի հիմքով էլ առաջարկվել է կնքել պայմանագիր: Սակայն, սահմանված ժամկետում բավարար գնահատված «Ժիլյո» ԱԿ-ի կողմից պայմանագիրը չստորագրելուց հետո հանձնաժողովը Արմեն Եսայան Աշոտի ԱՁ-ի նկատմամբ կիրառել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասը, որի իրավունքը չուներ: Հետևաբար, գտնում ենք, որ հանձնաժողովը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասը Արմեն Եսայան Աշոտի ԱՁ-ի նկատմամբ կիրառելու իրավասություն չուներ, քանի որ «Ժիլյո» ԱԿ-ի հայտը բավարար է գնահատվել: Ավելին, ելնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջից, բավարար գնահատված հաղթող մասնակից չհամարված մասնակցին փաստաթղթեր ներկայացնելու պահանջ նույն օրենքով նույնպես նախատեսված չէ:

Ինչ վերաբերվում է 20.07.2021թ.-ի թիվ 5 արձանագրության 1.1 կետին, ապա ինչպես նշվեց վերը՝ Արմեն Եսայան Աշոտի ԱՁ-ին չէր կարող համարվել հաղթող մասնակից, հետևաբար ԱՁ-ի նկատմամբ կիրառելի չէ նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածը:

Ելնելով վերը նշվածից, խնդրում ենք Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված դիմումը մերժել»:

Արմեն Եսայան Աշոտի Ա/Ձ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/198 ընթացակարգի շրջանակներում 04.08.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի

վերաբերյալ, ապահովել է իր մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 22.07.2021թ. թիվ 01/61-17276 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից 20.05.2021թ. հայտարարվել է ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/137 ծածկագրով գնման ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել Արմեն Եսայան Աշոտի Ա/Ձ-ն և գնահատող հանձնաժողովի որոշմամբ ճանաչվել է ընտրված մասնակից:

Անգործության ժամկետի ավարտից հետո օրենքով սահմանված կարգով 02.07.2021թ. մասնակցին ներկայացվել է պայմանագիր կնքելու, արակավորման և պայմանագրի ապահովումներ ներկայացնելու առաջարկ: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/137 ծածկագրով պայմանագիրը և վերը նշված ապահովումները: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Մասնակիցը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Վերոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված՝ ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) պարբերությամբ, առաջարկում եմ Մասնակցի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/198 ընթացակարգի շրջանակներում 04.08.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/198 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/198 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/137» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Արմեն Եսայան Աշոտի Ա/Ձ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.06.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել Ընթացակարգի հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ Արմեն Եսայան Աշոտի Ա/Ձ-ին, ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով 02.07.2021թ. ծանուցել է Արմեն Եսայան Աշոտի Ա/Ձ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.07.2021թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ արձանագրվել է, որ Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն գնահատող հանձնաժողովի որոշմամբ Մասնակիցը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից, քանի որ չի տրամադրել հաստատված պայմանագիրը և ապահովումները և որոշում է կայացվել, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, Ընթացակարգը հայտարարել չկայացած:

5. **<u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 28.07.2021թ. թիվ 26/26-1/12103-2021 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 22.07.2021թ. թիվ 01/61-17276 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:*** Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին: Որակավորման ապահովում չի ներկայացվում, եթե ընտրված մասնակիցը կամ տվյալ ընթացակարգի շրջանակում վերջինիս կողմից՝ որպես պաշտոնական ներկայացուցիչ, մատակարարվող ապրանքներն արտադրող կազմակերպությունը, հայտերը բացելու օրվա դրությամբ ունի միջազգային հեղինակավոր կազմակերպությունների (Fitch, Moodys, Standard & Poor’s) կողմից շնորհված վարկունակության վարկանիշ առնվազն Հայաստանի Հանրապետությանը շնորհված սուվերեն վարկանիշի չափով: Եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը՝

- չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի տասնհինգ, իսկ գերազանցելու դեպքում՝ երեսուն տոկոսին.

- չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, որակավորման ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով, բացառությամբ շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության ծառայությունների գնումների, որոնց դեպքում ապահովումը ներկայացվում է սույն պարբերությամբ նախատեսված երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով.

- գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, որակավորման ապահովումը ներկայացվում է բանկերի կամ ապահովագրական կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքների կամ կանխիկ փողի ձևով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ***ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում սպանձնված պարտավորության խախտում:***

Այսպես, Երևանի քաղաքապետարանի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/137» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Արմեն Եսայան Աշոտի Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.06.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել Ընթացակարգի հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ Արմեն Եսայան Աշոտի Ա/Ձ-ին, ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով 02.07.2021թ. ծանուցել է Արմեն Եսայան Աշոտի Ա/Ձ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.07.2021թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ արձանագրվել է, որ Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն գնահատող հանձնաժողովի որոշմամբ Մասնակիցը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից, քանի որ չի տրամադրել հաստատված պայմանագիրը և ապահովումները և որոշում է կայացվել, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, Ընթացակարգը հայտարարել չկայացած:

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերի 9.3-րդ, 9.4-րդ և 9.5-րդ ենթակետերի համաձայն՝

9.3 Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ընդ որում պայմանագրում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

9.4 Պայմանագիր կնքելու մասին պատվիրատուի ծանուցումն ընտրված մասնակցին ուղարկելու օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ընտրված մասնակցի

էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ պայմանագիր կնքելու առաջարկը տրամադրված լինելու մասին:

9.5 ***<u>Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:</u>*** Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Ընդ որում՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր և դրա ներկայացման գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում և հաստատմանը հաջորդող աշխատանքային օրը ուղեկցող գրությամբ տրամադրվում է ընտրված մասնակցին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***<u>եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:</u>***

Այսինքն՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանվում են հստակ ժամկետներ պայմանագիրը ստորագրելու, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները ներկայացնելու համար, որոնք չպահպանելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը կնքելու իրավունքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Երևանի քաղաքապետարանի կողմից սույն ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա փաստական հանգամանքների հետ՝ գտնում եմ, որ Արմեն Եսայան Աշոտի Ա/Ձ-ն ըստ էության հրաժարվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/137» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում պայմանագիրը կնքելուց և թույլ տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, քանի որ Մասնակիցը սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և Պատվիրատուին չի ներկայացրել որակավարման և պայմանագրի ապահովումները:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ***ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում սպանձնված պարտավորության խախտում:***

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Անդրադառնալով Մասնակցի կողմից ՍՑ-ՆԳ-2021/198 ընթացակարգի շրջանակներում դիրքորոշմամբ վկայակոչված այն դիտարկմանը, որ Արմեն Եսայան Աշոտի Ա/Ձ-ն չէր կարող համարվել հաղթող մասնակից, հետևաբար Արմեն Եսայան Աշոտի Ա/Ձ-ի նկատմամբ կիրառելի չէ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածը, ապա սույն մասով հարկ եմ համարում արձանագրել, որ նման դիտարկումն անհիմն է, քանի որ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.20-րդ ենթակետով հստակ սահմանվում է, որ Ընտրված մասնակցի կողմից ***պայմանագիրը չկնքելու (հրաժարվելու) կամ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը***՝ սույն հրավերի 1-ին մասի 8.13-ից 8.20-րդ կետերով սահմանված ընթացակարգի կիրառմամբ:

Վերոգրյալով պայմանավորված՝ գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 24.06.2021թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրելով, որ «Ժիլյո» Ա/Կ-ն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն զրկվել է պայմանագիր

կնքելու իրավունքից, քանի որ չի տրամադրել հաստատված պայմանագիրը և ապահովումները, այնուհետև, նույն արձանագրությամբ կայացված որոշման համաձայն՝ ընտրված մասնակից ճանաչելով հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ Արմեն Եսայան Աշոտի Ա/Ձ-ին, գործել է Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.20-րդ ենթակետով սահմանված պահանջի պահպանմամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.07.2021թ. թիվ 26/26-1/12103-2021 գրությամբ Արմեն Եսայան Աշոտի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Արմեն Եսայան Աշոտի Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**